



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱՐՄԱՐՆ



Տ Ա Ր Ե Կ Ա Ն
Ղ Ա Շ Կ Ե Տ Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ
ՎԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019



ԵՐԵՎԱՆ
2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

9 ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ՏԵՍԱԿԱՆ

10 ԱՐԺԵՔԵՐ

12 ՀԱԱՀ-Ն ՄԵԿ ԽԱՅԱԳՐՈՎ

14 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

16 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

23 ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

35 ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ

40 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

42 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ
ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱԱՀ-ՈՒՄ

44 ԿԱՐԻԵՐԱ

48 ՖԻՆԱՆՍՆԵՐ

50 ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ



ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի
Նախագահ

Հարգելի գործընկերներ:

Առաջին հերթին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանին ցուցաբերած վստահության, ինչպես նաև անմիջական օգնության համար: Ձեզանից յուրաքանչյուրը վերջին երկու տարիների ընթացքում տարբեր ձևաչափերով օժանդակում և սատարում է բարեփոխումների իրականացմանը մեր համալսարանում:

Ես բավաթիվ առիթներով նշել եմ, որ կրթության բնագավառում բարեփոխումներն ավելի հեռանկարային և երկարաժամկետ են, և դրանց հաջող իրականացումը պահանջում է ահռելի աշխատանք, ջանասիրություն և նվիրվածություն: Սակայն յուրաքանչյուր հեռանկարային նպատակի հասնելու համար անհրաժեշտ են փոքր հաղթանակներ, և սույն հաշվետվության մեջ տեսնում ենք այն հաղթանակները, որոնք ձանապարհ են հարթելու ավելի մեծ հաջողությունների համար:

Կրթությունն առանցքային նշանակություն ունի գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտների վարգագման համար, որոնք ապահովում են Հայաստանի տնտեսության մեկ քառորդը: Սակայն գյուղատնտեսության ոլորտի վարգացումն արտահայտվում է ոչ միայն մակրոտնտեսական ցուցանիշներով, այլև մեր երկրի պարենային անվտանգությունն ապահովող գյուղացիների ամենօրյա բավազարչար աշխատանքով: Ուստի մենք պետք է ձգտենք անել ամեն ինչ, որ գյուղացին ցանկանա ապրել և արարել հայրենի գյուղում, իսկ երիտասարդ սերունդը ցանկանա մնալ և վարգացնել գյուղը: Այս համատեքստում ողջունելի են այն քայլերը, որոնք իրականացվում են Ագրարային համալսարանի վերափոխման ուղղությամբ, մասնավորապես իրականացվող այն ծրագրերը, որոնք հիմքեր են ստեղծում ագրոտեխնոլոգիական կրթության համար:



Ցանկանում եմ ընդգծել, որ որևէ բարեփոխման ետևում կանգնած են մարդիկ, առանց որոնց մեզ չի հաջողվի հասնել մեր նախանշած նպատակներին: Առաջին հերթին և ամենակարևոր դերակատարությունը մեր համալսարանում ունեն ուսանողները: Սիրելի ուսանողներ, հուսով եմ, որ յուրաքանչյուր տարի, տեսնելով իրականացվող փոփոխությունները, դուք ավելի մեծ հաճույքով կուսանեք և հետագայում գործունեություն կծավալեք հենց ձեր ընտրած մասնագիտությամբ:

Շնորհակալ եմ դասախոսական կազմին, որը պատասխանատու է ոչ միայն գիտելիքի և մասնագիտական փորձի փոխանցման համար, այլև լուրջ դերակատարություն ունի անձերի, անհատականությունների ձևավորման գործում: Մենք բոլորս պատասխանատվություն ենք կրում ապագա սերնդի մի հատվածի դաստիարակության համար, և մեզանից է նաև կախված մեր Հայրենիքի ապագա վարճացումը:

Շնորհակալ եմ համալսարանի ղեկավարներին, որ հավատարիմ են մնում բարեփոխումների իրենց սկսած ուղուն և գործելակերպին: Շնորհակալ եմ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ շարունակական օժանդակության համար, ինչպես նաև միջպազային կապակերպություններին, որոնց օժանդակությամբ մեկնարկել են մի շարք ծրագրեր:

Ակնհայտ է, որ մենք դեռևս շատ անելիքներ ունենք և կառուցվածքային բարեփոխումներին ու ենթակառուցների ստեղծմանը պետք է հաջորդեն ուսումնական նոր ծրագրերը, ավելի շատ դաշտային աշխատանքները և նորարարության ինտեգրումը: Հուսով եմ, որ հետևողական և ճիշտ աշխատանքի շնորհիվ մենք կդառնանք տարածաշրջանային ագրոտեխնոլոգիական կենտրոն:



ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՀԱԱՀ ռեկտոր

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար 2019 թվականը շրջադարձային էր մի շարք առումներով: Մենք նշանակալից հաջողությունների ենք հասել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, դասավանդման գործելակերպի արդիականացման, ուսանողների և դասախոսների ներուժի վարճացման, գիտական ու հետազոտական աշխատանքների կիրառականության ապահովման, ուսումնագիտական գործունեության տեխնոլոգիական նորացումը երաշխավորող ենթակառույցների ստեղծման աննախադեպ ծավալի ապահովման ուղղությամբ:

Ամփոփելով տարին՝ ես պետք է արձանագրեմ, որ ընդհանուր առմամբ մենք հասել ենք մեր առջև դրված նպատակներին. Ագրարային համալսարանը մի կողմից հայտնվել է Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգում երկարամյա լճացումից հետո մեկնարկած լուրջ բարեփոխումների առաջնագծում, իսկ մյուս կողմից ամրագրել իր դերը որպես երկրի գյուղատնտեսության ու ագրոբիվեստի ոլորտի շարժիչ ուժ: Այս փաստն արձանագրում են մեր բոլոր շահակիցներն ու գործընկերները Հայաստանում և արտերկրում, պետական կառույցները և, իհարկե, մեր շրջանավարտները, ուսանողներն ու նրանց ծնողները:

Տարվա ընթացքում արտերկրի հեղինակավոր համալսարանների, միջազգային ու տեղական բազմաթիվ կազմակերպությունների հետ կնքվել են համագործակցության տասնյակ հուշագրեր, Վալիենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի հետ կնքվել է կրկնակի դիպլոմ տրամադրելու վերաբերյալ հուշագիր, միջազգային ու տեղական գործընկերների աջակցությամբ հարյուրմիլիոնավոր դրամի շինվերակառուցողական աշխատանքներ են մեկնարկել և այժմ բուռն ընթացքի մեջ են: Համալսարանն առանցքային դերակատարություն է



ստանձնել գյուղատնտեսության ոլորտում աննախադեպ ծավալի ու արդյունավետության պետական աջակցության ծրագրերի իրականացման գործում:

Ծանոթանալով հաշվետվության մեջ ամփոփված հաջողություններին՝ դուք հասու կդառնաք մեկ տարվա ընթացքում կատարված հսկայածավալ աշխատանքին: Այն հնարավոր է դարձել մեր գործընկերների էական աջակցության և ՀԱԱՀ կուռ թիմի փոխկապակցված աշխատանքի շնորհիվ: Ես շնորհակալություն եմ հայտնում բոլորին, ովքեր մեկ օգնեցին 2019 թ.-ը դարձնել Ագրարայինի տարի:

2019 թ. կատարված այդ մեծ աշխատանքի շնորհիվ է, որ մենք ամուր հիմքեր ենք նախապատրաստել Համակարանի 90-ամյա հոբելյանի տարին՝ 2020-ը, դիմավորելու վստահությամբ, առարկայական լավատեսությամբ և բարեփոխումների՝ արդեն անկասելի ընթացքն ու ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի վերափոխման գործընթացն առավելագույն արդյունավետությամբ շարունակելու վճռականությամբ:


ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեր առաքելությունն է պատրաստել մասնագիտական հմտություններով և ոլորտի շահակիցների հետ համագործակցությամբ երկրի ագրոպարենային համակարգը վարգացնելու ունակ ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ մասնագետների:

Համալսարանը խթանելու է իր գիտական ներուժը՝ առաջարկելով առաջընթացի լավագույն լուծումներ, ներդնելու է արդիական տեխնոլոգիաներ՝ օգտագործելով և ցուցադրելով գիտելիքահենք տնտեսության արդյունքները:

ՏԵՍԼԱԿԱՆ

Համալսարանի տեսլականն է դառնալ ստեղծարարությամբ և նորարարություններով առաջնորդվող ագրոտեխնոլոգիական ուսումնագիտական գերազանցության կենտրոն՝ խթանելով գյուղատնտեսական կրթության, գիտության, խորհրդատվության և արտադրության ներդաշնակ փոխգործակցությունը:



ԱՐԺԵՔՆԵՐ

Գերազանցություն

Ձգտել և հասնել որակի բարձր նշանողի, պրոֆեսիոնալիզմի, ապահովել շարունակական բարելավում, խրախուսել և խթանել համալսարանի գործունեության բոլոր ոլորտներում անհատական և թիմային ներդրումներն ու ձեռքբերումները:

Սոցիալական պատասխանատվություն

Ծառայել հանրությանը, հարստացնել նորարարական գիտելիքներով և պատրաստել ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու ունակ մասնագետների:

Արժանապատիվ միջավայր յուրաքանչյուրի համար

Պահպանել էթիկայի նորմերը, լինել պակիվ և արդար, երաշխավորել ակադեմիական պատվություն և պակվություն:

Հաշվետվողականություն և թափանցիկություն

Մշտապես կարևոր համարելով ներքին և արտաքին շահակիցների մասնակցությունը՝ աշխատել թափանցիկ, լինել հաշվետու:

Ուսանողակենտրոնություն

Ձևավորել ուսանողների ստեղծարարության, վարգացման համար անհրաժեշտ ուսումնական, հավասար հասանելի ու գործակցային միջավայր՝ ապահովելով նրանց ակտիվ ներգրավվածությունը:

Առաջնորդություն

Խթանել առաջնորդության հատկությունների ձևավորումը, սովորեցնել լինել ինքնավստահ և ինքնուրույն լուծել խնդիրներ՝ պինելով լավագույն փորձով, ոգեշնչելով փոխել աշխարհը դեպի լավը:



ՆԱԿ-ն մեկ հայացքով

Հիմնվել է **1930** թվականին

5 ֆակուլտետ

Առկա և հեռակա ուսուցման ձևեր

Բակալավրիատի **31** կրթական ծրագիր*

44 մագիստրոսական ծրագիր*

3 մասնաճյուղ Վանաձորում,
Սիսիանում և Շիրակում

7983 ուսանող, որից
3933-ը՝ հեռակա ուսուցման
դեպարտամենտում *

650 դասախոս, որից
435-ը՝ գիտության դոկտոր և թեկնածու *

3 գիտական կենտրոն

2 գիտահետազոտական ինստիտուտ

7 հետազոտական կենտրոն

* Տվյալները ներկայացված են 2019 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ

Կրթության որակի բարելավման նպատակով ուսումնական գործընթացի նորովի կազմակերպման առումով 2019 թվականը բեկումնային տարի էր Ագրարային համալսարանի համար:

Համալսարանը բակալավրիատում անցել է 4-ամյա կրթության համակարգին՝ մեկ աշխատանքային կիսամյակի ներմուծմամբ: Հիմնովին բարեփոխվել, արմատական հայեցակարգային, բովանդակային ու կառուցվածքային փոփոխությունների են ենթարկվել ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, ընդ որում՝ օպտիմալացնելով մասնագիտական կրթական ծրագրերի և առարկաների ցանկը: Այս աշխատանքներում համալսարանի մասնագետներին մեծապես օգնել են գյուղատնտեսական արտադրության և վերամշակող արդյունաբերության առաջատար ընկերությունների ղեկավարներն ու մասնագետները, որով և առաջընթաց կարևոր քայլ է ապահովվել ոլորտում ագրարային մասնագիտությունների փաստացի պահանջարկի բարձրացման ուղղությամբ:

Լիարժեքորեն գործում է ուսումնական գործընթացի կառավարման e-Buh համակարգը:

Դասավանդման մեթոդաբանության և ընդհանրապես ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոտեցումների մեջ նույնպես կարևոր փոփոխություններ են տեղի ունեցել: Ուսանողների ավելորդ ու ինքնանպատակ

ծանրաբեռնվածությունից խուսափելու, լսարանային ու արտալսարանային ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու, դասախոս-ուսանող նոր որակի փոխհարաբերությունների արմատավորման վերաբերյալ համալսարանի ղեկավարության` հստակ ձևակերպված պահանջների իրականացմանը նպաստել են ձեռնարկված արդյունավետ միջոցառումները: Դրանք ներառում են դասաժամի տևողության կրճատումը, դասախոսների և ուսումնառողների աշխատակազմի աշխատավարձերի և ուսանողների անվանական կրթաթոշակների բարձրացումը, համալսարանի ղեկավարության` ուսանողների և դասախոսների շահագրգիռ վերաբերմունքի ու վարքագծի բավականին կտրուկ փոփոխությանը նպաստած սկզբունքային քաղաքականության հետևողական կիրառումը:

Մասնագիտական ամենաարդիական թեմաներով կարճաժամկետ և միջնաժամկետ դասընթացների առումով 2019-ը կարելի է համարել ռեկորդային տարի թե՛ շահառուների թվով և մասնագիտական ու սոցիալական խմբերի ներկայացուցչականությամբ, թե՛ դասընթացների գործնական նշանակությամբ ու ձեռք բերված գիտելիքների ու հմտությունների` հետագա ուսումնառության կամ աշխատանքային գործունեության մեջ կիրառականությամբ: Այսպես`

- ▶ Անգլերենի, համակարգչային տարբեր ծրագրակազմերի անվճար ու սուբսիդավորվող դասընթացներին մասնակցել է 369 ունկնդիր:
- ▶ Զերմատնային մշակաբույսերի արտադրության և կառավարման 8-ամսյա կրթական ծրագրի 20 ունկնդիր:
- ▶ Գինեսերների վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների 150 ունկնդիր:
- ▶ Աշխարհատեղեկատվական համակարգերի և հեռահար լոնդավորման դասընթացի 36 ունկնդիր:
- ▶ «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման ու դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակում ֆերմերների համար իրականացվող դասընթացների 110 ունկնդիր:

Չնվազող պահանջարկի պայմաններում դասընթացները կշարունակվեն 2020-ին:

Համալսարանի մասնագետները 2019-ը շրջադարձային դարձրեցին մեր երկրի գյուղատնտեսության լուրջ հիմնախնդիրներից մեկի` լուրիկի հարավամերիկյան ցեցի դեմ տարած հաղթանակով: Արարատի մարզի Ոսկետափ և Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքներում 10 հա ընդհանուր մակերեսի վրա իրականացված պայքարի միջոցառումների փորձնական ծրագիրը կատարյալ արդյունքներ գրանցեց` ըստ էության վերացնելով այդ վտանգավոր վնասատուն: Ծրագրի արդյունքների հանրայնացման նպատակով կազմակերպված դաշտային օրվան մասնակցել է 70 ֆերմեր: Ցեցի դեմ պայքարի վերաբերյալ բաժանվել է 5000 տեղեկատվական գրքույկ:



ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ



Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն

Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը (ԱՌԻԿ) Ագրարային համալսարանի «դրոշակակիր» ստորաբաժանումն է, որը գործում է արդեն շուրջ 20 տարի՝ 2000 թ.-ից: Այն ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանի համատեղ ծրագիր է, որի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը կազմված են այդ համալսարանի համապատասխան բակալավրիական և մագիստրոսական ուսումնական պլանների հիման վրա:

ԱՌԻԿ-ում լսարանային տեսական գիտելիքը հաջողությամբ զուգակցվում է մասնագիտական ոլորտում՝ մասնավորապես Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոնի (ICARE) հետազոտական ծրագրերի շրջանակներում ձեռք բերվող գործնական հմտությունների հետ: Դա հնարավորություն է տալիս ուսանողներին լավագույնս նախապատրաստվել ագրոբիզնեսի տնտեսագիտության, կառա-



վարման, ֆինանսների և մարկետինգի ոլորտներում պատասխանատու պաշտոններ վբաղեցնելուն: Անգլերենի գերազանց իմացությունը և արդիական հաղորդակցական հմտությունները ԱՌԻԿ-ի շրջանավարտներին ավելի մրցունակ են դարձնում մասնագիտական աշխատաշուկայում:

ԱՌԻԿ-ն առաջարկում է ագրոբիվեստի և շուկայաբանության 2 տարվա բակալավրական և 2 տարվա մագիստրոսական ծրագրեր: Ագրոբիվեստի մագիստրոսական ծրագիրը (MAB) գործում է 2010 թ.-ից: Այն ագրոբիվեստի տնտեսագիտության ոլորտում մասնագիտացված միակ մագիստրոսական ծրագիրն է տարածաշրջանում:

ԱՌԻԿ-ի ուսանողները ձեռք են բերում ֆերմերներին, ագրոբիվեստի ընկերություններին, պետական կառույցներին, ֆինանսական կազմակերպություններին և ՀԿ-ներին օժանդակելու համար անհրաժեշտ ամենաարդիական գիտելիքներն ու հմտությունները: Ոլորտի ընկերությունների հետ սերտ գործնական կապը ուսանողների համար բազում հնարավորություններ է ստեղծում սովորելու, աշխատելու և իրենց կարողությունները արգասնելու համար:

Այստեղ դասավանդում են համաշխարհային համբավ ունեցող այնպիսի համալսարանների շրջանավարտներ, ինչպիսիք են Տեխասի A&M-ը, Քանզասի Նահանգային համալսարանը, Սիդնեյի համալսարանը, Քորնելի համալսարանը, Ֆլորիդայի Նահանգային համալսարանը և այլն:

ԱՌԻԿ-ի շրջանավարտները ստանում են ՀԱԱՀ-ի դիպլոմ, ինչպես նաև Տեխասի A&M համալսարանի ավարտական վկայական: 2019 թ. հունիսի դրությամբ ԱՌԻԿ-ի բակալավրիատն ավարտել է 616 ուսանող. ևս 118-ը ավարտել է մագիստրոսական ծրագիրը: Շրջանավարտներից մոտ 60-ը Վրաստանի Հանրապետությունից են:

Ավարտելուց մի քանի ամիս անց ԱՌԻԿ-ի շրջանավարտների ավելի քան 90 տոկոսն արդեն մասնագիտական աշխատանքի է անցնում՝ ՀՀ միջինից առնվազն կրկնակի բարձր միջին աշխատավարձով:



ԻՎԻ-ԷՆ Գինու ակադեմիա

2014

թ. հիմնադրված ԻՎԻ-ԷՆ գինու ակադեմիան առաջարկում է անգլերեն լեզվով գինու

ոլորտի արդիական կրթություն՝ Գինեգործություն և գինու բիվեստ 18-ամսյա հավաստագրային կրթական ծրագիրը, ինչպես նաև կարճատև գործնական դասընթացներ գինեստերների համար՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Հավաստագրային ծրագիրը իրականացվում է Գերմանիայի Գայլեն-հայմի համալսարանի հետ համատեղ:

Արդյունաբերական գինեգործության ավելի քան 6000 տարվա պատմություն ունեցող և խորհրդային 70 տարիների ընթացքում գինեգործական երկրի համբավը կորցրած Հայաստանը վերջին մեկ տասնամյակում գինու վերածնունդ է ապրում: Հայաստանում գինու արդյունաբերության վարգացման, հայկական գինիները միջազգայնորեն մրցունակ դարձնելու և հայ



Գինու զգայորոշումը Գինեգործություն և գինու բիզնես ծրագրի կարևոր և առավել «համեղ» մասն է

հասարակության՝ որպես գինի խմող հասարակության ավանդույթների վերականգնման գործում Ի-Վի-Էն գինու ակադեմիայի նորարարական Գինեգործություն և գինու բիզնես կրթական ծրագիրը դարձել է էական գործոն:


Ի-Վի-Էնի մի շարք շրջանավարտներ այսօր ունեն նաև իրենց սեփական գինին և սեփական հեղինակավոր ապրանքանիշերը:

«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» մագիստրոսական ծրագիր. գերմանական կրթություն՝ կրկնակի դիպլոմի հնարավորությամբ

2003 թ-ից. ՀԱԱՀ-ում գործում է «Ագրարային մենեջմենթ» միջապգային մագիստրոսա-

կան հայալեզու, իսկ 2011-ից՝ նաև գերմանալեզու ծրագիրը:

2016 թ. ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջապգային մագիստրոսական ծրագիրը ԳԴՀ Կրթության որակի վերահսկման և հավատարմագրման ինստիտուտից (ACQUIN) ստացել էր միջապգային հավատարմագրում, որի շնորհիվ 2019 թ. նոյեմբերի 29-ին Վայինշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում (ՎԿԳՀ) ՀԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի ռեկտորների հանդիպման



Վայինշտեֆան-Թրիսդորֆի համալսարանում հերթական վերապատրաստումից հետո՝ պրոֆ. Շրաուդերերի և դոկտ. Արիստակեսյանի հետ

ժամանակ կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ համաձայնագրով ամրագրված չափանիշներին համապատասխանող «Ագրարային մենեջմենթ» ծրագրի հայաստանցի մագիստրանտներին կտրամադրվի կրկնակի դիպլոմ:



Ագրարային մենեջմենթ ծրագրի ուսանողների ծանաչողական այցերը ագրոբիզնեսի գերմանական ընկերություններ

Ծրագրի շրջանավարտները լիովին յուրացնում են ագրարային տնտեսության պլանավորման, հիմնման, կառավարման և վարձագման ամբողջական շրջափուլն ըստ արտադրական ուղղությունների:

ՀԱԱՀ «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի գրեթե բոլոր շրջանավարտներն աշխատանքի են անցել ՀՀ և ԳԴ տնտեսության տարբեր բնագավառներում՝ բանկերում, նախարարություններում, կապի և տեղեկատվության, ագրոբիզնեսի ոլորտներում, խորհրդատվական կազմակերպություններում, խաղողագործական և այլ տնտեսություններում, պետական և մասնավոր ծառայություններում, գյուղաօրհին աջակցող հիմնադրամներում և կրթական հաստատություններում:

«ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» դասընթաց

ՀԱԱՀ

-ում ICARE հիմնադրամի իրականացրած «Ջերմատնային մշակաբույսերի

մշակություն և կառավարում» դասընթացը Հայաստանում ջերմատնային



Ծրագրի ունկնդիրները տեսական գիտելիքներն ամրապնդում են երկրի առաջատար ջերմատնային տնտեսություններում



արդյունաբերության բուռն զարգացման պատեհաժամ արձագանքն է: Տասնամյա դասընթացի նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել փակ գրունտում բույսերի մշակության առանձնահատկություններին, ջերմատներում օգտագործվող արդիական սարքավորումներին, միջոցներին ու նյութերին, ջերմատան միկրոկլիման կարգավորող համակարգերին, բույսերի ընդհանուր ֆիզիոլոգիային և ջերմատնային հիմնական մշակաբույսերի մշակության արդիական տեխնոլոգիաներին:

Տարեցտարի չթուլացող հետաքրքրություն և աճող հեղինակություն վայելող դասընթացին մասնակցում են տարիքային ու մասնագիտական ամենատարբեր խմբեր ներկայացնող ունկնդիրներ՝ ոլորտում գործող մասնագետներ, ուսանողներ, դասախոսներ, ֆերմերներ, գիտաշխատողներ: Պատահական չէ, որ դասերն անցկացվում են երեկոյան ժամերին:

Դասավանդող դասախոսները հայաստանյան ջերմատնային բիզնեսում գործող ամենահայտնի մասնագետներն են:

«ԱՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ» հավաստագրային ծրագիր

«Աննդի անվտանգության համակարգերի կառավարում» նորարարական կրթական ծրագիրը ՀԱԱՀ-ի Ագրոբիվնեսի ուսուցման կենտրոնում մեկնարկել է 2017 թ. հունվարին: Ծրագրի մեկնարկին նախորդել է ՀԱԱՀ-ի, Փենսիլվանիայի նահանգային համալսարանի (ՓԵՆ ՍՏԵՅԹ) և ICARE հիմնադրամի միջև փոխըմբռնման համապատասխան հուշագրի ստորագրումը՝ 2016 թ. սեպտեմբերին:



Ծրագրի մասնակիցները ավարտական հավաստագրեր են ստանում ԱՄՆ ԱՉԳ հայաստանյան առաքելության տնօրեն Դեբորա Գրիգերից

Ծրագրի ուսումնական պլանը կապմել են Փեն Ստեյթ և Վիրջինիա Թեք համալսարանների մասնագետները: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ-ից ֆինանսավորվող Իննովեյթ-Հայաստան նախագծի շրջանակում: Ծրագրի առաջին տարին դասավանդող դասախոսները նշված ամերիկյան երկու համալսարաններից էին: Սկսած երկրորդ տարվանից՝ 2018 թ.-ից, դասավանդում են տեղացի մասնագետներ:

Հավաստագրային (ավարտելիս ուսանողները ստանում են Փեն Ստեյթի հավաստագրեր) ծրագիրը բաղկացած է 6 մոդուլներից՝ Սննդագիտության ներածություն, Սննդի միկրոկենսաբանություն, Սանիտարիա, HACCP, Գործընթացների վերահսկման համակարգերի բարելավում և Սննդի պաշտպանություն:

Ուսանողները հավաստագրեր են ստանում յուրաքանչյուր մոդուլն ավարտելուց և հաջողությամբ քննություններ հանձնելուց հետո: Միաժամանակ ավարտական հավաստագիր են ստանում ամբողջ դասընթացը հաջողությամբ ավարտելուց հետո, որը բացի տեսական դասընթացից ներառում է նաև լաբորատորիաներում ու մենթամթերքի վերամշակման ձեռնարկություններում գործնական հմտությունների ձեռքբերում:



Ծրագրի հաջողությունը ոչ միայն ԱՌԻԿ-ի ուսանողների գիտելիքներն ու հմտություններն են, այլև՝ մնդի անվտանգության կարևորագույն հարցում վարքագծային նոր մշակույթի սերմանումը ուսանողության, նրանց ընտանիքների և շահակից ավելի լայն հանրության շրջանում:

ՀԱԱՀ-ում նորարարական ծրագրի հաջողությունը Փեն Ստեյթ համալսարանի մեր գործընկերներին շահագրգռեց այն ընդօրինակել Ուկրաինայում:



«ԱՇԽԱՐՀԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՀԵՌԱՀԱՐ ԶՈՆԴԱՎՈՐՈՒՄ» հավաստագրային ծրագիր

Աշխարհատեղեկատվական համակարգերը սկսել են գործնական կիրառություն գտնել գյուղատնտեսության ոլորտում: Ագրարային համալսարանի հերթական Նորարարական ձեռնարկը՝ «Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում» 10-շաբաթյա հավաստագրային ծրագիրը, որը մեկնարկել էր 2018 թ. Նոյեմբերին, հաջողությամբ շարունակվեց 2019-ին: Մասնակցելու ցանկություն ու-



նեցող դիմորդների մեծ թիվն այս տարի ավելի մեծ մրցակցություն ստեղծեց: ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանի էկոհամակարգի գիտության և կառավարման դեպարտամենտի հետ համատեղ՝ Գերմանիայի միջապգային համագործակցության ընկերության (GIZ) աջակցությամբ իրականացվող ծրագրի առաջին տարվա դասավանդողները Տեխասի A&M համալսարա-

նից էին: 2019-ին նրանց փոխարինեցին տեղացի մասնագետները:

«Աշխարհատեղեկատվական համակարգեր», «Հեռահար զոնդավորում», «Անօդաչու թռչող համակարգեր» և «Գլոբալ տեղորոշման համակարգեր» մոդուլների շրջանակներում ծրագրի ունկնդիրները սովորում են տարածական խնդիրների լուծման և բնական ռեսուրսների կառավարման մեթոդներ, ներառյալ՝ ԱՏՀ արդիական ծրագրակապի օգտագործմամբ իրական արտադրական խնդիրների լուծումը: Նրանք սովորում են կապել, վարել, վերլուծել և քարտեզագրել տարածական և ոչ տարածական տվյալների շտեմարաններ: Շտեմարաններում առկա տեղեկատվության հիման վրա նրանք սովորում են



Տեխասի A&M համալսարանի գործընկերների օգնությամբ յուրացվում են ԱՅՍ-ների և գլոբալ տեղորոշման համակարգերի օգնությամբ արտադրական ու բնապահպանական խնդիրներ լուծելու հմտությունները

ձևակերպել և գնահատել տարածական տարբեր մոդելներ ու դրանց կիրառելիությունը գյուղատնտեսական և ագրովերամշակման ձեռնարկություններում առկա կոնկրետ արտադրական խնդիրների լուծման գործում:



ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

Ուսումնափորձարարական «խելացի» ջերմատուն

«**Բ**արձրակարգագրոնոմների վերապատրաստման նպատակով ուսումնափորձարարական ջերմատան վերակառուցման ծրագրի» վերաբերյալ 32 մլն դրամ արժողությամբ դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվել է 2019 թ. մարտին: Դրամաշնորհը տրամադրել է ՀՀ-ում ճապոնիայի դեսպանությունը:

ՀԱԱՀ-ի հին ջերմոցի տեղում կառուցվեց նոր ուսումնափորձարարական ջերմատուն: 200 քմ տարածք չբաղեցնող ջերմատունը ուսումնական և հետապոտական նպատակներով օգտագործելու են ոչ միայն ՀԱԱՀ-ի ուսանող-




Ներն ու դասախոսները, այլև Ագրոբիվենսի հետապոստությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի և ՀԱԱՀ-ի համատեղ «Ջերմատնային մշակաբույսերի մշակություն և կառավարում» 10-ամսյա նորարարական կրթական ծրագրի ունկնդիրները, ինչպես նաև ֆերմերներ և մասնագետներ:



Ջերմատունը հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով, ներառյալ՝ հովացման, կաթիլային ոռոգման, հիդրոպոնիկ համակարգերով:

Ջերմատանն օգտագործվելու է «Խելացի» կառավարման համակարգ, որը 2019-ին տրամադրել են Թայբեյի Չիաո Թունգ ազգային համալսարանի գործընկերները: Ջերմատունը բաժանված է 4 մասերի, որտեղ ուսանողներն ու հետապոստողները կարող են աշխատել տարբեր մշակաբույսերի ուղղությամբ:

«Խելացի» ջերմատունը լավագույն հնարավորությունը կընձեռի ՀԱԱՀ ուսանողներին՝ ավելի արդյունավետ անցկացնել իրենց փորձուսուցումը:



Ջերմատան կառավարման «Խելացի» համակարգը Թայբեյի Չիաո Թունգ ազգային համալսարանի գործընկերների նվերն է ՀԱԱՀ-ին

Այգեպտղաբուծության ուլորտի վարձացման ՖՐՈՒՏԵՆԻԱ Նախագիծ

2019

թ. դեկտեմբերին մեկնարկեց Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի վարձացման (ՖՐՈՒՏԵՆԻԱ) 4-ամյա նախագիծը: Ավստրիական վարձացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ նախագիծն իրականացնում են Ագրոբիվեստի հետապոստությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը և Հայաստանի ազգային ագրարային համալսարանը:



ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագիծը սկսվում է առաջին նշանակություն ունի Ագրարային համալսարանի համար, քանի որ նախագծի միջոցով արդիականացվելու են ագրոնոմիական առարկաները, ներդրվելու են դասավանդման նոր մեթոդներ և վերապատրաստվելու են ոլորտային դասախոսներ: Այս նախագծով ուսանողին հնարավորություն կընձեռվի գործնական միջավայրում կիրառել ձեռք բերած տեսական գիտելիքները: Այդ նպատակով ՀԱԱՀ-ի Ոսկեհատի ուսումնափորձական տնտեսությունում կհիմնվի ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած ինտենսիվ պտղատու այգի:

ՖՐՈՒՏԵՆԻԱ նախագծի շրջանակում ստեղծվելու է նաև պտղաբուծության ոլորտում տեսակով առաջին էլեկտրոնային ուսուցման և տեղեկատվական հայալեզու հարթակը, որը հասանելի կլինի բոլոր շահառուներին՝ ֆերմերներին, ուսանողներին, փորձագետներին, ինչպես նաև լայն հանրությանը:

Շարք են մտել ընդհանուր քիմիայի երկու լաբորատորիաներ

Ավարտվել են Ընդհանուր քիմիայի ամբիոնի 138 քառ. մ ընդհանուր մակերեսով երկու արդիական լաբորատորիաների վերակառուցման և կահավորման աշխատանքները: Լաբորատորիաների արդիականացման աշխատանքներն ավելի քան 11 մլն դրամի չափով



համաֆինանսավորել է Քրոնիմետ բարեգործական հիմնադրամը: Լաբորատորիաները երկար սպասված լավագույն նվերն են ուսանողներին ու ամբիոնի դասախոսներին:

Գնահատման և թեստավորման կենտրոն

ICARE հիմնադրամի աջակցությամբ իրականացված ֆոնդահայթայթման միջոցով հավաքված շուրջ 19 մլն դրամը, որի մեծ բաժինը ՀԱԱՀ բարեկամներ Ջուդի Սարյանի և Վիկտոր Զառուգյանի առատաձեռն նվիրաբերությունն է, ուղղվել է ՀԱԱՀ գնահատման և թեստավորման կենտրոնի վերակառուցմանն ու վերապինմանը:



Կենտրոնը բաղկացած է 96 համակարգիչ ունեցող չորս ժամանակակից լաբորատորիաներից: Թեստավորման կենտրոնում անցկացված փորձնական քննությունները ցույց տվեցին, որ մարդկային գործոնը բացառող համակարգչային թեստավորման համակարգն ապահովում է ուսանողների գիտելիքների գնահատման առավելագույն օբյեկտիվություն:

Սիսիանի մասնաճյուղում հիմնվել է կաթի վերամշակման լաբորատորիա

ՀԱԱՀ

Սիսիանի մասնաճյուղում
շահագործման է հանձնվել
կաթի վերամշակման ուսում-
նափորձնական լաբորա-
տորիա՝ «Մասնագիտական
կրթության և ուսուցման
վարճացում Սյունիքի մար-
զում» նախագծի շրջա-
նակում, որը 2016 թ.
հոկտեմբերի 1-ից իրա-
կանացրել է «Ռազմա-
վարական վարճացման
գործակալություն» (ՌԶԳ)
ՀԿ-ն՝ Կիրառական գիտու-
թյունների Բեռնի համալսա-
րանի գյուղատնտեսության,



անտառային և պարենային գիտությունների դպրոցի (HAFL) հետ համատեղ և
HEKS/EPER (Շվեյցարիայի օգնություն) կապմակերպության աջակցությամբ:

Անասնաբուժական կրթագիտական գերապանցության կենտրոն

2019

թ.-ից Նորարարությունների
մրցակցային հիմնադրամի
դրամաշնորհային ծրագրե-

րի շրջանակում ՀԱԱՀ-ում մեկնարկեց Անասնաբուժական կրթագիտական
գերապանցության կենտրոն (ԱԿԳԿ) հիմնադրելու ծրագիրը: ԱԿԳ կենտրոնի
հիմնումը խթան կհանդիսանա ոլորտի կրթական և գիտական գործընթաց-
ների բարեփոխման և արդիականացման համար, կնպաստի մասնագիտա-
կան կարողությունների ձևավորմանը՝ միտված հետապոտահենք կրթության
իրականացմանը, կրթություն-հետապոտություն և բուհ-աշխատաշուկա կա-
պերի ստեղծմանն ու ամրապնդմանը: Դրամաշնորհի ընդհանուր գումարը
(ներառյալ համաֆինանսավորումը) 160 մլն դրամ է:

Գերապանցության կենտրոնի ստեղծմամբ ՀԱԱՀ կրթական համակար-
գում կներդրվեն անասնաբուժության կրթության նոր եղանակ՝ կեղծակերպող
(սիմուլյացիոն) ուսուցում և նոր մոտեցում՝ կենսաբարոյագիտական կրթու-
թյուն:



Կենտրոնում կատեղծվեն՝

- ▶ Անասնաբուժական ժամանակակից բաժին-լաբորատորիա՝ հագեցած կեղծակերպող կաղապարներով (սիմուլյացիոն մուլյաժներով) և էլեկտրոնային կրթական ծրագրերով, որտեղ ուսանողները կկարողանան բարելավել իրենց գործնական հմտությունները և կարողությունները՝ կրթության ընթացքում պահպանելով կենսաբարոյագիտության (բիոէթիկայի) նորմերը:
- ▶ Նորագույն սարքավորումներով համալրված ժամանակակից անասնաբուժական բուժարան, որտեղ ուսանողները գործնականում կկիրառեն ձեռք բերված կարողություններն ու հմտությունները. բուժարանը միաժամանակ ծառայություններ կմատուցի բնակչությանը:

Բուժարանը գիտական հետազոտությունների իրականացման հիմք կհանդիսանա նաև ֆակուլտետի ուսանողների, ասպիրանտների, հետազոտողների և դասախոսների համար: Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնը կունենա գործունեության կրթական, հետազոտական և խորհրդատվական բաղադրիչներ: Մեր երկրի և հրավիրյալ դասախոսները պարբերաբար կիրականացնեն անասնաբուժության ոլորտի մասնագետների և ֆերմերների վերապատրաստումներ, մասնագիտական որակի բարձրացման միջոցառումներ, կմատուցեն խորհրդատվական ծառայություններ:

Ջրային և հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոն

Ջրային պաշարները, սակավության, հետզհետե նվազելու պատճառով ռազմավարական նշանակություն են ստանում որևէ երկրի տնտեսության համար: Ջուրը դառնում է աշխարհաքաղաքական, այլընտրանք չունեցող գործոն: Ուստի աշխարհի հետ համընթաց քայլելու ունակ երիտասարդ մասնագետներ պատրաստելը ժամանակի հրամայականն է: ՀԱԱՀ-ում այս ոլորտում իրականացվում են արմատական բարեփոխումներ: Մասնավորապես հիմնվել է Ջրային և հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոն:

Կենտրոնը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտակրթական և խորհրդատվական հիմքի վրա ֆերմերային տնտեսություններում կիրականացնի հողային և ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը նպատակամղված հետազոտական, նախագծային, փորձացուցադրական, ագրոբիվեստի վարձացմանը նպաստող խորհրդատվական ծրագրեր: Այս ասպարեպում ՀԱԱՀ-ը համագործակցում է Ագրոբիվեստի և գյուղի վարձացման կենտրոն (CARD) հիմնադրամի հետ: Որպես արդյունք՝ համալսարանի 2-րդ մասնաշենքի տարածքում արդեն վերանորոգվել և կահավորման փուլում է երկու լսարան:

Կենտրոնի գործունեության արդյունավետության բարձրացման համար CARD հիմնադրամը նվիրաբերել է բաց և փակ ջրանցքների ուլտրաձայնային 8 հոսքաչափ, IRROMETER կապմակերպությունից ձեռք է բերվել սենսորով 900M մակնիշի 4 թվային խոնավաչափ, ինչպես նաև տեղագրական, քարտեզագրական, չափագրման և նախագծերը բնության մեջ փոխադրելու խնդիրների լուծման համար ստացվել է Համաշխարհային տեղորոշման արբանյակային համակարգի ընդունիչ՝ համապատասխան տեխնիկական բնութագրիչներով:



Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգի ընդունիչ



Բաց և փակ ցանցերի հոսքաչափ



Հողի խոնավության չափման թվային խոնավաչափեր

Լաբորատոր հպորությունների նոր համալրումներ

Կառուցված լաբորատորիաներին կավելանան սննդի անվտանգության (ձեռք կբերվեն մոտ 25 մլն դրամի սարքավորումներ) և օրգանական գյուղատնտեսության (ձեռք կբերվեն մոտ 18 մլն դրամի սարքավորումներ) լաբորատորիաները՝ էրասմոս+ ծրագրի աջակցությամբ իրականացվող Abionet նախագծի և Վիեննայի BOKU համալսարանի հետ համատեղ իրականացվող Օրգանական գյուղատնտեսության պարգացման BOAA ծրագրի շրջանակում:



Ագրոտեխնոլոգիաների ինկուբատոր

2019

թ. հունիսի 6-ին ՀԱԱՀ-ում բացվեց Հայաստանի առաջին Ագրոտեխնոլոգիաների

ինկուբատորը: Նախագիծն իրականություն է դարձել Ագրարային համալսարանի, ICARE հիմնադրամի, Nation in Action կրթաձեռնարկչական հարթակի, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսավորմամբ գործող Impact Aim Venture Accelerator-ի ռազմավարական գործակցության շնորհիվ: Նախաձեռնությանը միացել են նաև Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի հիմնադրամը (FAST) և Ասիական պարգացման բանկի վենչուրային հարթակը:

Նախագծի շրջանակում համալսարանը սկսել է համագործակցել գյուղուղրտի ապագայով մտահոգ և դրա պարգացման գործում նորարարական գաղափարների ու ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը կարևոր համարող գործընկերների հետ: ՀԱԱՀ-ի ագրոտեխնոլոգիական ինկուբատորը հնարավորություն է տալիս համախմբել մեր գիտական-նորարարական ներուժն ու կյանքի կոչել ագրոտեխնոլոգիական ստարտափեր: Ինկուբատորի ծառայություններից օգտվելու հնարավորություն ունեն ՀԱԱՀ-ի և այլ համալսարանների ուսանողներն ու աշխատակիցները, շահագրգիռ անհատներն ու կապակերպությունները:

ՀԱԱՀ-ի ագրոտեխնոլոգիաների ինկուբատորը նպատակ ունի աջակցել ագրոբիզնեսի ոլորտի նորաստեղծ կապակերպություններին և ձեռնարկատերերին՝ տրամադրելով տեխնոլոգիական և գործարար ծառայություններ, համատեղ աշխատանքի տարածք և մեկնարկային ֆինանսավորում:

Ծրագրի առաջին փուլում ՀԱԱՀ-ի ուսանողների և տասնյակ այլ շահառուների համար իրականացվեց ստարտափերի կառավարման և գյուղատնտեսության ոլորտի հնարավորությունների վերաբերյալ կրթական դասընթաց: Հաջորդ՝ ինկուբացիոն գործընթացի փուլը ենթադրում է ստարտափ գաղափարների առաջքաշում, թիմերի ձևավորում, ճարտարագիտական կրթություն և ագրոտեխնոլոգիական լաբորատորիաների ստեղծում:



Ստարտափերի առաջին մրցույթը տեղի ունեցավ դեկտեմբերին՝ գյուղատնտեսության հիմնախնդիրների ուղղությամբ ագրոտեխնոլոգիական լուծումներ առաջարկող ստարտափ թիմերի մասնակցությամբ: Մրցույթի մասնակից 16 ստարտափ թիմերը ներկայացրեցին իրենց նորարարական լուծումները՝ միտված ագրոտեխնոլոգիական մարտահրավերներին, իսկ ժյուրին ընտրեց լավագույն երեք ստարտափ գաղափարները, որոնք էլ արժանացան դրամական պարգևների՝ «Forest Guard», «Saffronomatic» և «Smart Garden»: Խրախուսման արժանացավ նաև «TreeCone» ստարտափ գաղափարը:

TOPAS նախագծի շրջանակում հիմնվել է լսարան

2019

թ. մայիսի 31-ին, Եվրամիությունից ֆինանսավորվող Էրասմուս + Հիմնական գործողություն-2

ծրագրի «Տեսական ուղղվածությունից անցում դեպի գործնական կրթության ագրարային ուսուցման ոլորտում» (TOPAS) նախագծի անդամ երկրները ներկայացնող աշխատանքային խմբերի՝ ՀԱԱՀ-ում կայացած եռօրյա խորհրդակցության ավարտին համալսարանում բացվեց լսարան: Այն հագեցած է համապատասխան համակարգչային և օժանդակիչ այլ տեխնիկական միջոցներով՝ ագրարային ոլորտում տնտեսագիտական տվյալների բազայի ստեղծման և վերլուծության ուղղությամբ դասընթացների կազմակերպման նպատակով:



Խորհրդանշական է դարակազմիկ գիտական հայտնագործություններ կատարած հայազգի մի շարք գյուտարարների նկարների առկայությունը լսարանում:



Նորաբաց լսարանում ավարտական հավաստագրեր հանձնվեցին ավելի վաղ Մեծ Բրիտանիայում անցկացված չորսշաբաթյա վերապատրաստմանը հաջողությամբ մասնակցած՝ Ուկրաինայի, Ուկրեկստանի և Հայաստանի ներկայացուցիչներին, այդ թվում՝ ՀԱԱՀ-ի Ագրոբիվեստի և տնտեսագիտության ֆակուլտետի 4 ուսանողների:



TOPAS նախագիծը գյուղատնտեսական գործնական կրթության նպատակների իրականացման շուրջ միավորել է յոթ երկրների (Գերմանիա, Ռումինիա, Լեհաստան, Միացյալ Թագավորություն, Հայաստան, Ուկրաինա և Ուկրեկստան) 10 համալսարանների: Հայաստանը ներկայացված է ՀԱԱՀ-ով և ԵՊՀ-ով:

Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական «ԱԿՈՒՆՔ» կենտրոն

Կոտայքի մարզի Ակունք գյուղում գտնվող ՀԱԱՀ Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական տնտեսությունը Շեն բարեգործական կապմակերպության նվերն է Ագրարային համալսարանին: Այն պբադեցնում է 6,2 հա տարածություն և ծառայում է համալսարանի ուսանողների գործնական կրթության և փորձուսուցման նպատակներին:

2020 թ. գարնանը «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի շրջանակում ձեռք կբերվեն մորենու ու անփուշ մոշի տնկիներ ու կիրականացվեն Ակունքի տնտեսությունում դրանց տնկման աշխատանքներ: Տնտեսությունը կառուցված ջրավազանի շնորհիվ կունենա ոռոգման ինքնավար համակարգ: Այս նախագծի շրջանակում ՀԱԱՀ-ը և ICARE հիմնադրամը համատեղ



Ակունքում կիրականացնեն նաև պտղատու ծառերի էտ և արագաճ բարդու կտրոնների տունկ, որոնց օգնությամբ հետագայում տնտեսության ելքային սահմանագծի երկայնքով կհիմնվեն դաշտապաշտպան շերտեր: Աշխատանքները կիրականացնեն համալսարանի ուսանողները՝ Ագրոնոմիական ֆակուլտետի դասախոսների անմիջական աջակցությամբ:

«ՈՍԿԵՀԱՏ» ուսումնափորձնական տնտեսություն և գինու ուսումնագիտական կենտրոն

2019

թ. «Ոսկեհատ» ՈՒՓՏ-ում մշակվել են 4 հա նորատունկ և 8 հա բերքատու խաղողի այգիներ, որտեղից հավաքվել է Հաղթանակ, Չարենցի և Կանգուն սորտերի 53.860 կգ խաղող, որից 9500 կգ-ը մթերվել է Ոսկեհատի գինու ուսումնագիտական կենտրոնի կարիքների համար:

ՀԱԱՀ-ի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում գործարկվել են գինու գործարանը և Գինու ուսումնագիտական կենտրոնը, որոնք դարձել են դուրս կրթության լավագույն կառույցներ: Այստեղ արտադրվող «Սերունդ» գինին շուտով դուրս կգա հայրենական շուկա:



Գինեգործարանի համար Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և Ագրոբիվեստի հետապոստությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի աջակցությամբ ձեռք են բերվել շուրջ 20 մլն դրամի սարքավորումներ:



«Սերունդ» գինին դեպի շուկա իր ուղին սկսում է հայրենական և արտերկրի մասնագետների բարձր զննահատականով

2019 թ. սեպտեմբերից կենտրոնի և GIZ-ի գործակցության շրջանակում ICARE հիմնադրամի Ի-Վի-Էն գինու ակադեմիայի հետ համատեղ իրականացվում է սիրիահայերի ինտեգրման «Տեղահանված և տեղաբնակ խոցելի խմբերի տնտեսական և սոցիալական ներգրավվածությունը Հարավային Կովկասում» ծրագիրը, որի մասնակիցները ստանում են ժամանակակից տեսական և գործնական գիտելիքներ, ինչպես նաև ծրագրի 6 մասնակիցների համար խաղողի հայկական սորտերից պատրաստվում են 6 տարբեր տեսակի գինիներ: Պատրաստվող գինիների ֆիզիկաքիմիական հետապոստություն-



ներն իրականացվում են Գինու ակադեմիայի գինու քիմիայի ուսումնական լաբորատորիայում:

Տարվա ընթացքում կենտրոնը շարունակել է սերտորեն համագործակցել Ի-ՎԻ-ԷՆ գինու ակադեմիայի հետ՝ տրամադրել է արտադրական տարածք, մատուցել գինեգործական ծառայություններ և ընձեռել ուսանողների արտադրական փորձուսուցումների իրականացման հնարավորություն:

Որպես արդյունք՝ կենտրոնում ուսանողների ակտիվ մասնակցությամբ պատրաստվել են գինիներ:

Կենտրոնը համագործակցում է մի շարք կրթական հաստատությունների հետ (Երևանի հայ-հունական պետական քոլեջ, «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր և այլն), որոնց սովորողները և դասախոսներն արտադրական փորձուսուցումների, փորձի փոխանակման և մասնագիտական կողմնորոշման նպատակով 2019 թվականի ընթացքում բավմիցս այցելել են կենտրոն:

Ուսանողները և ոլորտի մասնագետները կարող են մասնակցել կենտրոնում իրականացվող բոլոր գործընթացներին՝ կարգացնելով իրենց մասնագիտական կարողությունները: Կենտրոնի բոլոր ծրագրերին և գործընթացներին ակտիվ մասնակցություն են ունեցել թե՛ Ագրարային համալսարանի ագրոնոմիական և տեխնոլոգիական մասնագիտությունների ուսանողները, թե՛ համագործակցող կրթական հաստատությունների համապատասխան բաժինների ուսանողներն ու դասախոսական կազմը:

Ոսկեհատի տնտեսությունում 2 հա տարածք էլ հատկացվել է նորարարական փորձացուցադրական մշակության տեխնոլոգիաների ցուցադրման համար: Նախագիծն իրականացվելու է Հայաստանում Արգենտինայի դեսպանության, Արգենտինայի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտի աջակցությամբ և Հայկական բարեգործական ընդհանուր միության ֆինանսավորմամբ: Առաջիկայում կմեկնարկեն կաթիլային ոռոգման համակարգի անցկացման և ջրավազանի կառուցման աշխատանքները:





ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգում գիտահետազոտական աշխատանքները գլխավորապես

իրականացվել են 3 գիտական կենտրոնների, 2 գիտահետազոտական ինստիտուտների, 6 հետազոտական կենտրոնների և կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի միջոցով, ագրոպարենային ոլորտն ընդգրկող կարևորագույն 16 ուղղություններով:


Հրապարակված գիտական հոդվածների և գիտաժողովների վեկույցների թիվը 131 է, որից 90-ը գիտական հոդվածներ են, իսկ 41-ը՝ գիտաժողովների վեկույցներ:



Գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար 2019 թ. հատկացվել է 236,4 մլն դրամ:




Գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական և գիտական կենտրոնների միջև ֆինանսավորումը բաշխվել է հետևյալ համամասնությամբ:



ՀԱԱՀ-ի մասնագետների ստեղծած հողամշակման մեքենան կայքարի ինտենսիվ և ավանդական այգիների մոլախոտվածության դեմ

ՀԱԱՀ Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմատացման

ԳՀԻ Դաշտավարության և անասնապահության մեքենայացման բաժնում 2019 թ.-ի ընթացքում բազային ֆինանսավորմամբ կատարվել է չորս գիտական թեմա, որոնք վերաբերում են հացահատիկային մշակաբույսերի ցանքի տեխնոլոգիային և կարտոֆիլի բերքահավաքի մեքենայացմանը: Իրականացվում են նաև հողի ֆիզիկատեխնոլոգիական հատկությունների հետապոտական, նախագծվող գյուղմեքենաների եռաչափ մոդելավորման աշխատանքներ:



Բաժինն աստիճանաբար համալրվում է նախագծման և գիտափորձերի իրականացման համար անհրաժեշտ, ինչպես նաև մեքենաշինական ժամանակակից լաբորատոր սարքավորումներով:



Պտղատու այգիների հողամշակման ֆրեզ-մեքենա



Բազային ֆինանսավորման թեմաներին կուգահեռ կատարվում են նաև ինտենսիվ և ավանդական այգեգործության լիակատար հողամշակման մեքենայի նախագծման աշխատանքներ: Դրանք իրականացվում են ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեից ֆինանսավորվող կիրառական արդյունքի ձեռքբերմանը միտված թեմատիկ ֆինանսավորման դրամաշնորհային ծրագրի շրջանակում, որի ընդհանուր բյուջեն 25,7 մլն դրամ է, որից 9 մլն` համաֆինանսավորմամբ: Մեր մասնագետների ստեղծած պտղատու այգիների միջբնային և մերձբնային տարածությունների հողամշակման մեքենան լիովին կբավարարի այգետարածքներում մոլախոտվածության դեմ մեխանիկական պայքարի պահանջը:

Կատարված գիտահետապոտական աշխատանքները տպագրվել են ՀԱԱՀ գիտական պարբերականում և ամրագրվել են ՀՀ գյուղի արտոնագրով:



Մենդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժինը կատարում է պոնոտիկ ինֆեկցիաների քարտեպագրում

Մ իջազգային դրամաշնորհով բաժինը 2019 թ. սկսել է իրականացնել «Հյուսիսային Կովկասում պոնոտիկ ինֆեկցիաների քարտեպագրում» նախագիծը, որի բյուջեն 6.213.612 դրամ է: Այն կավարտվի 2021 թվականին:

Ակնկալվող հիմնական գիտական արդյունքներն են՝

- ▶ ԳՁՄ ռիսկի գնահատման նոր չափանիշի՝ մշակաբույսերի և/կամ հողի միկրոբիոտի ուսումնասիրություն, որը հնարավորություն կտա խուսափել ԳՁՄ վտանգներից՝ ալերգիաներ, մարդու և կենդանիների առողջության համար վտանգավոր նոր հիվանդածին բակտերիաների աճի խթանում և այլն:
- ▶ Նախա- և հետճառագայթային թերապիաներում պրոբիոտիկ կիրառության արդյունավետության գնահատում՝ հիմնվելով պրոբիոտիկի հակաօքսիդացիոն հատկությունների վրա:

Բաժինն ունի ընդամենը 4,5 հաստիք, սակայն իր առջև դրված գիտական խնդիրներն իրականացնում է բարձր մարկարդակով և ամենայն պատասխանատվությամբ: Կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աստղիկ Փեփոյանի ղեկավարությամբ բաժինը մեկ և կես տասնամյակից ավելի իրականացրել է բավմաթիվ գիտական ծրագրեր: Նրա ղեկավարած միջազգային գիտական ծրագրերում տարիներ շարունակ համախմբվել են նաև լավագույն մասնագետներ ՀՀ այլ բուհերից, ԳԱԱ տարբեր ինստիտուտներից:



Լաբորատորիայում ստեղծվել է երեք պրոբիոտիկ՝ առողջապահական, գյուղատնտեսական նշանակությամբ բակտերիաներ, որոնք «պատրաստ» են ճառագայթումից պաշտպանել զինվորներին, տիեզերագնացներին, հիվանդներին, կարգավորել աղիքային բակտերիալ խախտումները: Աստղիկ Փեփոյանը մտադիր է ստանալ համապիտանի պրոբիոտիկ, որը կկիրառվի սննդային միասնական՝ հող-բույս-կենդանի-մարդ շղթայի բոլոր օղակներում:

2019 թ. բաժնի աշխատակիցները մասնակցել են 7 գիտաժողովի, գրախոսվող ամսագրերում տպագրվել է 7 հոդված (այդ թվում՝ 5-ը 2-ից բարձր ազդեցության գործակցով միջազգային ամսագրերում):

Բաժինը վերջերս տեղափոխվել է ուսումնասիրությունների համար բարենպաստ ու հարմարավետ միջավայր, որը նոր հայտնագործությունների կարևոր նախապայման է: Վերանորոգվել է Սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների բաժնի ավելի քան 100 քառ. մ մակերեսով լաբորատորիան:



ՄԻՋԱԳՎԱՅԻՆ ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Sարին արգասաբեր էր համալսարանի միջպալին գործակցության ընդլայնման ու խորացման առումով:

Տարվա ընթացքում համալսարանն արտերկրի տարբեր բուհերի, միջպալին կապմակերպությունների հետ կնքել է համագործակցության 13 հուշագիր (համանման հուշագրեր են ստորագրվել նաև 40 տեղական կապմակերպությունների հետ):

2019 թ. էրասմուս + միջպալին կրեդիտալին շարժունություն ծրագրի շրջանակում իրականացվել են բազմաթիվ դասավանդումներ և վերապատրաստումներ՝ գործակցելով ավելի քան 26 եվրոպական համալսարանների հետ: 2019 թ. ՀԱԱՀ-ն ունեցել է 32 էրասմուս+ ՀԳ1 ծրագիր, այդ թվում՝ 21-ը նոր՝ 2019-ին հաստատված: Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ի վաղեմի գործընկեր համալսարանների հետ կապը չի խզվում, միաժամանակ ավելանում են նաև նոր գործընկեր բուհեր:

Միջպալին գործակցության կարևորագույն ծրագրերից է Վայեհենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի հետ համատեղ իրականացվող Ագրարալին մենեջմենթ մագիստրոսական ծրագիրը, որի շրջանակում 2019-ին ստորագրվել է կրկնակի դիպլոմ տալու վերաբերյալ հուշագիր:

Վիեննայի Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի (BOKU) հետ իրականացվող «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի շրջանակում ավարտին է հասցվել Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանի մշակումը: Ծրագիրը կմեկնարկի 2020-2021 ուսումնական տարում:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԱԵՂԻՊՈՒՄՆԵՐ ՆԱԱՀ-ում

2019 թ. համալսարանը հյուր- ընկալեց տասնյակ տա- րաբնույթ միջոցառումներ,

որոնց մասնակցել են ավելի քան 30 երկրների ներկայացուցիչներ: Որպես միջոցառումների համակարգիչներ հանդես են եկել տարածաշրջանային և միջպաշտպան այնպիսի կազմակերպություններ ու գիտակրթական կառույցներ, ինչպիսիք են ՄԱԿ-ի ՊԳԿ-ն, Համաշխարհային բանկը, Պարենի համաշխարհային ծրագիրը, ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, Հայաստանի գործատուների հանրապետական միությունը, ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանը, ՌԴ գիտությունների ակադեմիան, HEKS EPER-ի Հարավային Կովկասի գրասենյակը, ՇԵՆ ԲՀԿ-ն, Հայկական տնտեսագիտական միությունը, Չինաստանի սննդի և խմորման արդյունաբերության պետական գիտահետազոտական ինստիտուտը՝ Չինաստանի կոմերցիայի նախարարության աջակցությամբ:

Երկկողմանի համագործակցություն սկսելու և խորացնելու նպատակով ՀԱԱՀ-ում հյուրընկալվել են Շվեդիայի Սյոդերթյորնի համալսարանի դասախոսները և միջպաշտպան գծով ռեկտորի խորհրդականը, Վալենտինա-Թրիստրֆի կիրառական գիտությունների համալսարանի պատվիրակությունը (համալսարանի նախագահի գլխավորությամբ), Արաբական Միացյալ Էմիրությունների անշարժ գույքի տեխնիկական վարձագման կորպորացիայի գործադիր նախագահը, Աֆղանստանի ազդարարին

բուհերի ներկայացուցիչները, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության երևանյան գրասենյակի ղեկավարը, ԱՄՆ ՊԴ ՎՆԳ Կենսաբանական վտանգների նվազեցման հայաստանյան ծրագրի ղեկավարը, ինչպես նաև ՀՀ-ում Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Լիբանանի, Նիդերլանդների թագավորության դեսպանների գլխավորած պատվիրակությունները:

ՌՈՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2019

-ին մի քանի անգամ ավելացել է ռուսանողական նախաձեռնությունների աջակցության ծա-

վալը: Ռուսանողական խորհուրդը գործել է մեծ ակտիվությամբ՝ հաճախակի կապմակերպելով ռուսումնաճանաչողական, մտավոր, մարզամշակութային և այլ նպատակային միջոցառումներ: Ուշագրավ են կենսաբազմապատկանության միջազգային օրվան նվիրված խորհրդածողովը, ավելի քան 15 մշակութային, 6 ժամանցային, 13 ճանաչողական, 14 բնապահպանական, 8 ինտելեկտուալ և 18 մարզական միջոցառումները: Տարվա միջոցառումների պարոն Ագրարային համալսարանի ավանդական «Ոսկե հասկ» մրցանակաբաշխությունն էր, որի ժամանակ մեծ հանդիսավորությամբ մրցանակներ հանձնվեցին 8 անվանակարգերում հաղթող խմբերին և անհատներին:





ԿԱՐԻԵՐԱ

2019

թ. նոյեմբերի 8-ին ՀԱԱՀ Կարիերայի վարձագման և շարունակական կրթության

բաժինը կազմակերպել էր «Ստացիր ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, գտիր ԱՇԽԱՏԱՆՔ, կառուցիր ԿԱՐԻԵՐԱ» կարգախոսով աշխատանքի տոնավաճառ, որին մասնակցեցին շուրջ 56 գործատուներ, այդ թվում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ՀՀ ԿԵ մննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ֆինանսաբանկային կազմակերպություններ, հայաստանյան առաջատար արտադրողներ, ՀԿ-ներ:

Մասնակից ուսանողների և շրջանավարտների համար տոնավաճառը շատ լավ հնարավորություն էր անմիջական կապ հաստատելու հայաստանյան առաջատար ընկերությունների, պետական կառույցների ներկայացուցիչների հետ, տեղեկանալ առկա թափուր աշխատատեղերի, փորձուսուցումների հնարավորությունների մասին, ընդգրկվել գործատուների կադրերի բազայում, գտնել մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանք: ՍԱՏՄ ղեկավար Գեորգի Ավետիսյանի գնահատմամբ՝ «այս միջոցառմամբ մենք տալիս ենք այն հարցի պատասխանը, թե որտեղ պետք է աշխատի Ագրարային համալսարանի շրջանավարտը: Լավ մասնագետների կարիք շատ կա, այդ թվում՝ նաև պետական կառույցներում»:



ՀԱԱՀ-ի աշխատանքային տոնավաճառը մասնագետի և գործատուի հանդիպման եզակի և արդյունավետ հնարավորություն է

Աշխատանքի տոնավաճառի միայն առաջին երեք ժամվա ընթացքում ընկերությունների տաղավարներ է այցելել ավելի քան 1500 մասնակից: Նրանք գործատուներին փոխանցեցին հարյուրավոր կենսագրական փաստաթղթեր: Ուրախալի է, որ տասնյակ ուսանողներ ու շրջանավարտներ աշխատանքի առաջարկ ստացան հենց տոնավաճառի ժամանակ:

Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնի հետ ինտենսիվ դասընթացների և խորհրդատվության ծրագիր

2019

 թ. Ագրարային համալսարանը, Երևանի պետական բժշկական համալսարանը և

Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնը հանդես եկան հետաքրքիր ու օգտակար համատեղ նախաձեռնությամբ: Հիշյալ կենտրոնը ստեղծվում է ոչ միայն պինհաշմանդամների առողջության, այլև նրանց սոցիալական ինտեգրման, կրթության և աշխատանքի հարցերով:

Ապրիլ ամսին ռեկտոր Վարդան Ուռուտյանի գլխավորությամբ ՀԱԱՀ-ի ուսանողների այցը Վերականգնողական կենտրոն և հանդիպումը կենտրոնում բուժվող պինվորների հետ նախանշեցին վերապատրաստման ինտենսիվ դասընթացների և խորհրդատվական աշխատանքների իրականացումը:

Ներկայումս ՀԱԱՀ հեռակա ուսուցման դեպարտամենտում ուսանում է 3 պինհաշմանդամ ուսանող:



Փորձուսուցում աշխատանքի հեռանկարով



ամալսարանում ընթացող արմատական բարեփոխումների ներկա փուլում մեծ դեր ունի կրթություն-արտադրություն արժեշղթան և այդ արժեշղթայում՝ փորձուսուցումը: Արդյունավետ կերպով կապմակերպված փորձուսուցման միջոցով տեսականորեն յուրացված գիտելիքները գործնական հմտությունների վերածելու նպատակային համադրությունն ապահովում է կրթական բաղադրիչի գործնական կիրառելիությունը: Մյուս կողմից, գործընկեր կապմակերպություններին և պետական կառույցներին հնարավորություն է ընձեռնվում գնահատել երիտասարդների մասնագիտական կարողությանկությունը:



Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գործնական աշխատանքների գործընկերները



Փորձուսուցման կապմակերպման և անցկացման արդյունավետության բարձրացման ուղղությամբ ներդրվում են նորարարական լուծումներ, մասնավորապես՝ նոր հուշագրերի կնքում, համագործակցության շրջանակների ընդլայնում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության իրականացում: Լրամշակվել և արդիականացվել է փորձուսուցման կապմակերպման նոր կանոնակարգը:

Փորձուսուցումների կապմակերպման շրջանակում համալսարանը համագործակցում է շուրջ 115 կապմակերպությունների հետ, որոնց հետ կնքվել են համագործակցության հուշագրեր, այդ թվում 32-ը՝ 2019 թվականին:



Հաշվետու ժամանակաշրջանում բոլոր ֆակուլտետներից տարբեր արտադրական կապմակերպություններ են գործուղվել 113 մագիստրանտ, բակալավրիատի 770 ուսանող:




Բակալավրիատի մոտ 80 ուսանողներ և մագիստրանտներ աշխատանքի են անցել այն կապմակերպություններում, որտեղ անցկացրել են իրենց գիտաարտադրական և արտադրական փորձուսուցումները:

Համալսարանի և գործընկեր կապմակերպության փոխգործակցության լավ օրինակ է Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտության 5-րդ կուրսի 5 լավագույն ուսանողների փորձուսուցումը Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում՝ հետագայում աշխատանքի տեղավորվելու հեռանկարով:

Ուսանողները հնարավորություն ունեցան սովորել անշարժ գույքի գրանցման գործընթացի բոլոր նրբություններն ու առանձնահատկությունները: Ամբիոնի դասախոսների կարծիքով՝ սա տարիների երազանքի իրականացում է այն առումով, որ «Հողաշինարարություն և հողային կադաստր» մասնագիտության ուսանողները կարողանում են փորձուսուցման ընթացքում յուրացնել կարևոր հմտություններ ու գիտելիքներ, ինչպես նաև իրական հնարավորություն են ստանում հետագայում աշխատելու մասնագիտությամբ:

Ֆինանսավորման աղբյուրները



Իրականացված ծրագրերը





ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱՋԱԿԻՑՆԵՐ

Ագրոբիզնեսի հետապոստությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE)

ԱՄՆ ՄԶԳ

Հայաստանում ճապոնիայի դեսպանություն

Հայաստանում Արգենտինայի դեսպանություն

Արգենտինայի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ազգային ինստիտուտ

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Փառնագիան ընտանիք հիմնադրամ

Հրայր և Աննա Հովնանյան բարեգործական հիմնադրամ

Ավստրիական վարձացման գործակալություն

Գերմանիայի միջազգային
համագործակցության ընկերություն (GIZ)

Քրոնիմետ բարեգործական հիմնադրամ

Համաշխարհային բանկի գրասենյակ
Հայաստանում

Չիաո Թունգ ազգային համալսարան
(Թայբեյ, Թայվան)

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր` ImpactAim
Venture Accelerator

Ասիական վարձացման բանկ

Վիկտոր Զառուգյան և Զուդի Սարյան

Ագրոբիզնեսի և գյուղի վարձացման կենտրոն
(CARD) հիմնադրամ

Շեն ԲՀԿ

**ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տերյան 74,
Երևան 0009, ՀՀ
(+374 10) 52 45 41
info@anau.am

